

**ԲԱՌԱԿԱՆ ՀԱԿԱՆՇՈՒԹՅՈՒՆԸ ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ,
ՆՈՐՄԱՅԻ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԽՈՍՔԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ**

ՌԻՄԱ ՇԱՆՈՒՆՑ

Յուրաքանչյուր լեզու ունի բառական բազմիմաստություն: Լեզվի բազմիմաստ բառերն ավելի շատ են, քան մենիմաստները: Բառերի մեծ մասը կարող է համաժամանակյա պլանով օգտագործվել մեկից ավելի իմաստներով: Այս առումով բազմիմաստությունը միևնույն բառի կազմում մի քանի իմաստների առկայություն է, այսինքն միևնույն հնչյունական և գրային կոմպլեքսը կարող է օգտագործվել որպես մի քանի իմաստների ամբողջություն և դիտվել մեկ միավոր: Այս տեսակետից բավական հետաքրքիր են բազմիմաստ հականիշ բառերի իմաստների քննությունը, հատկապես նրանց համակարգայնությունը, տարբեր իմաստներով կիրառվելու ժամանակ հականշային հարաբերությունների վերացման և պահպանման հատկությունները:

Բազմիմաստ հականիշ բառերը հականշային հարաբերությունների վերացման և պահպանման տեսակետից միապլան և միատեսակ չեն: Հաճախ այդ բառերը հանդես են բերում տարբեր տիպի հակադրությունների, հատկապես այն դեպքերում, երբ բազմիմաստ բառերի տարբեր իմաստների համար գոյություն ունեն տարբեր հականիշներ: Հաճախ էլ հակառակը. բազմիմաստ բառի իմաստներից միայն մեկը կամ երկուսն ունեն իրենց հականիշը, մնացած իմաստները նման հարաբերություններ չեն արտահայտում: Կոնկրետ օրինակներով դիտենք իմաստային հարաբերությունների այդ բազմազանությունը:


զույգ (թվեր)		կենտ
զույգ (թևեր)		—
զույգ (ընկերներ)		—
զույգ (եր) (ամուսիններ)		—
զույգ (եր) (երկվորյակներ)		—
բարձր (շենք)		ցածր
բարձր (ծովի մակերևույթ)		ցածր
բարձր (ձայնով)		ցածր
բարձր (ճնշում)		ցածր
բարձր (մակարդակ)		ցածր
բարձր (պաշտոն)		ցածր
երկար (պարան)		կարճ
երկար (հասակ)		կարճ
երկար (ժամանակ)		կարճ
երկար (ճառ)		սեղմ, համառոտ

դատարկ (բաժակ)		լի
դատարկ (տեղ, աթոռ)		զբաղեցրած
դատարկ (խոսք)		բովանդակալից
դատարկ (վերադարձ)		բեռով, բեռնված
դատարկ (զլուխ)		խելոք
դատարկ (սեղան)		ճոխ, լի

Ինչպես երևում է բերված օրինակներից, հականշային հատկանիշներով հակադրվող բառերն իրենց տարբեր իմաստներով լեզվում հանդես են բերում բաղմամբ հակադրություններ։ Այդ հակադրությունների բացահայտումը նարավորություն է տալիս իմաստային սահմաններում որոշել դրանց հակա-նիշները։

Այժմ դիտենք հականիշ բառերի իմաստային հարաբերությունները լեզվական համակարգի, նորմայի և անհատական խոսքի մակարդակում՝ ըստ է. Կոսերիուի տեսության¹։

Հայտնի է, որ լեզվական նորմայի հասկացությունը կապվում է նախ լեզվի համակարգի, ապա և խոսքի հետ։ Նորման տեղադրվում է գրական լեզվի համակարգի և խոսքի կիրարկության (ուղուս) միջև։ Լեզվի համակարգը վերացարկման ամենաբարձր աստիճանն է։ Համակարգին հակադրվում է նորման։ Նորմայի մակարդակին հակադրվում է անհատական խոսքը։ Վերջինս ավելի լայն է, քանի որ իր մեջ ներառում է նաև պատահական, ժամանակավոր երևույթներ։ Լեզվի նորման գտնվում է համակարգի իրացման՝ խոսքի միջև։ Ըստ Կոսերիուի այդ երեք տարբեր հասկացությունների սխեման կարելի է ներկայացնել հետևյալ ձևով.



Լեզվի կանոնական մակարդակի կամ նորմայի համար բնորոշ են որոշ հատկանիշներ. այսպես, նորման հարաբերականորեն կայուն է, պայմանավորված է հասարակության գնահատմամբ։ Նորմայի համար բնորոշ են նաև լեզվական իրացումների ընտրության, պարտադիրության և ճշտության հատկանիշները։ Լեզվական նորման նաև պատմական կարգ է և լեզվի զարգացման որևէ շրջանում ճիշտ համարվող մի երևույթ կարող է ոչ ճիշտ համարվել մի այլ շրջանում, այսինքն՝ նորմայի տեսանկյունից կարող է սխալ համարվել։ Օրինակ՝ ազատ բառը հին հայերենում բազմիմաստ էր և ուներ հետևյալ

¹ Э. Косериу, Синхрония, диахрония и история («Новое в лингвистике», вып. 3, М., 1963).

իմաստները. «1. անկախ, 2. ազնվական, իշխան, ոստանիկ, 3. զերծ յօտար կապոյ ի հարկաց, ի պարտեաց, ի բռնուէ, 4. ազատական, 5. արձակ, ընդարձակ, 6. զատ. հեռու, մեկուսի, անմասն»²։ Այս բառի մի քանի իմաստների հականիշները այսօր էլ կիրառելի են մեր լեզվում (անկախ-կախյալ, ազատ-զերծ, ընդարձակ-ենդ, հեռու-մոտ, անմասն-մասնակից և այլն)։ Ազատ բառի «ազնվական, իշխան, ոստանիկ» իմաստի հականիշը լեզվի զարգացման այդ շրջանում ծառայում էր շինակալական բառերն էին. «Զիք խտիր, ոչ ծառայի, ոչ ազատի», «Բազում և այլ ազատ մարդիկ, որ ոստանիկս անուանէին», «Ով երանելի տեր Վահան ընտրեալ յազատաց»³։ Բայց մեր օրերում, ներկա լեզվամտածողությամբ այդ բառերն այլևս հականիշներ չեն։ Ավելին, ազատ բառի «ազնվական, իշխան, ոստանիկ» իմաստն արդեն դուրս է եկել գործածությունից և կարելի է հանդիպել միայն պատմական անցյալը պատկերող ստեղծագործություններում։ Որոշ բառեր էլ թեև իրենց հականիշ իմաստները պահպանել են նաև ժամանակակից հայերենում, բայց ամեն դեպքում դրանց հականշտությունը դիտվում է՝ նկատի ունենալով պատմական որոշակի ժամանակահատված։ Օրինակ՝ «Ուզածդ ռամիկը իշխան է դարձել, իսկ շատ իշխաններ ռամիկներ դարձան» (Շ., էջ 29) նախադասության ռամիկ-իշխան բառերի հակադրությունը և նրանց հականշտությունը, կարծես, կասկած չի հարուցում։ Բայց դրանց հականշտությունը մենք դիտում ենք պատմական անցյալի տեսանկյունից։ Դրանք հակադրվում են որպես ավատական աշխարհի, սոցիալական տարբեր խավերի ներկայացուցիչներին տրվող անուններ և մեր օրերում դրանց հականշտությունը որոշ շափով վերանում է։ Ուստի, այդ բառերի հականշտությունը մենք դիտում ենք միայն ժամանակի անցած հատվածում։

Լեզվական նորման պահանջում է ընտրություն և ավելորդ տարրերի թռթափում։ Լեզվով հաղորդակցող յուրաքանչյուր անձ ղեկավարվում է որոշակի օրենքներով, որոնք ձեռք է բերել լեզուն ուսանելու ամբողջ ժամանակաշրջանում։ Այդ իսկ պատճառով լեզվական նորման միշտ ավանդական է. խոսողը հաճախ ընտրություն է կատարում փիրառելի ձևերից. այդ քնտրության ժամանակ խոսողի հիմնական նպատակներից մեկը ճիշտը և ոչ ճիշտը տարբերելն է։ Ահա թե ինչու նորման միշտ մնում է ավանդական։ Այս առումով տեսնենք. թե ինչ առանձնահատկություններ են հանդես բերում հականշալին խմբերը։ Ամենից առաջ դիտենք, թե դրանք ինչ հարաբերության մեջ են գտնվում լեզվական վերոհիշյալ կարգերի հետ։

Հականշալին խմբերը կարելի է դիտել որպես հակառակ իմաստների խմբեր, որոնցից յուրաքանչյուրն իրացվում է լեզվում գործող նորմաներին համապատասխան։ Հականշալին հարաբերություններ արտահայտող բառերը, ավելի ճիշտ նրանց իմաստները, շատ դեպքերում լեզվի մակարդակում ունենում են պոտենցիալ հնարավորություններ։ Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում լեզվում գործում են որոշակի բառեր, խմբեր, որոնք հարացույց են կազմում և պայմանավորված են լեզվական նորմայով, այսինքն՝ գործում են նորմայի մակարդակում։ Այսպես, թերի-լրիվ հականշալին խմբի անդամների համար, ըստ լեզվում գործող բառագործածական կանոնների, յուրաքանչյուր դեպքում կիրառվում են տարբեր հարացույցներ։

² «Նոր բառգիրք հայկազյան լեզվի», հ. 1, Վենետիկ, 1836, էջ 4։

³ Նույն տեղում։

թերի (պատմություն)	. . .	ավարտում
թերի (կողմ)		դրական
թերի (փաստաթղթեր տեղեկություններ)	. . .	լրիվ
թերի (բառարան)		լիակատար:

Լեզվական նորման որոշ չափով, ինչպես նշեցինք, սահմանափակում է ընտրությունը. այն հնարավորություն չի տալիս ամեն դեպքում օգտվել ազատ ընտրությունից: Նորման որոշակի սահմանափակում է մտցնում կիրառելի ձևերի, հնարավորությունների համակարգում: Օրինակ՝ գլուխը լիք կապակցությունն իր անվանական նշանակությամբ հատուկ չէ ժամանակակից հայերենի կանոնական գործածությանը, ինչպես հատուկ է գլուխը դատարկ կապակցությունը, բայց ըստ Կոստերիուի տեսության, այն թույլատրելի է համակարգի տեսակետից: Լեզվի համակարգում առկա հակադիր զույգերից կիրառության հնարավորությունների սահմաններում կոնկրետ դեպքերում առանձնանում են տարբեր հականիշներ, ինչպես նշեցինք թերի-լրիվ հականշային խմբի մասին խոսելիս (թերի ավարտում՝ գրական ստեղծագործության մասին, թերի-լրիվ՝ փաստաթղթերի մասին և այլն):

Հաճախ բառերի տարբեր հականիշներն ունենում են ոճական նշանակություն և կիրառելի են տարբեր իրադրություններում ու հանգամանքներում: Օրինակ՝ ճշմարտախոս բառի համար հականիշներ կարող են լինել ստախոս, սուտիկ, փշաճ բառերը: Սրանցից ստախոսը պարտադիր և հանձնարարելի է նորմայի համակարգում, իսկ վերջին երկուսը կարելի է գործածել միայն համապատասխան ոճերում: Թեև դրանք նորմայի տեսակետից շեղում չեն, բայց և հանձնարարելի չեն: Դրանք կիրառելի են խոսակցական լեզվում. ինչպես՝ «Քիչ մնաց հավատայի, փշաճ» (ԾԾ, 1. IV. 1974): Կամ ժամանակակից հայերենում հականիշ են գեր-եփնառ բառերը: Դրանք պարտադիր և հանձնարարելի են նորմայի մակարդակում, իսկ համապատասխան ոճերում կիրառվում են դրանց հոմանիշները, որոնք ոճական արժեք ունեն: Այսպես. թմբիկ բառը կիրառվում է միայն խոսակցական լեզվում, մանավանդ, երբ խոսողը դրական վերաբերմունք ունի այն անձի նկատմամբ, որին այդպես է անվանում: Իսկ լմփռը բառը գեհակաբանություն է և կիրառվում է հատկապես այն ժամանակ, երբ խոսողը հակակրանք է տածում այն անձի հանդեպ, որի մասին այդպես է ասում: Օրինակ՝ Նա հինգ հարյուր ֆրանկ էր տվել գռնապանուհուն, որը մի լմփռ, խոշոր... կին էր» (ՊՎՄԺԶ, էջ 100):

Լեզվի համակարգային բնույթը նրա կարևոր հատկանիշներից մեկն է: Այն ավելի պարզ է արտահայտվում կենդանի, խոսակցական լեզվում: Նշված հատկությունը բացատրվում է մարդկային հոգեբանությանը հատուկ կողմերով և հաղորդակցման առանձնահատկություններով: Դրանց հիմքը կարելի է համարել խոսելու պրոցեսը և կոնկրետ իրադրությունը, որոնց պայմաններում տեղի է ունենում խոսակցությունը: Խոսողն աշխատում է որքան հնարավոր է ճիշտ արտահայտվել, ճիշտ կառուցել իր խոսքը: Յուրաքանչյուր դեպքում ստացվում է լեզվական արտահայտման յուրատեսակ կաղապար, որը հատուկ է տվյալ իրադրության մեջ, տվյալ պահին արտահայտված խոսքի իմաստին: Լեզվական արտահայտման այս ձևերը, իհարկե, իրենց մեջ ներառում են ավելի մեծ համակարգայնության անհրաժեշտ տարրեր: Կարևոր

յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հաղորդակցութիւնն է, խոսողի և լսողի կամ գրողի և կարդացողի միմյանց լրիւ փոխըմբռնումը:

Լեզվի համակարգում անընդհատ ստեղծվում են անկրկնելի դարձվածքներ, որոնք կարող են հասկանալի չլինել տվյալ լեզուն լավ շտիրապետողի համար: Այսպես. որ հաղթել բայի հականիշը պարտվելն է, կարող է իմանալ հայերեն ոչ այնքան լավ իմացող յուրաքանչյուր մարդ, բայց հաճախ խոսքի մէջ հանդիպում է ոչ թե պարտվել, այլ զենքը վայր դնել դարձվածքային արտահայտութիւնը, որը իմաստային տեսակետից հականիշ է հաղթել և հոմանիշ պարտվել բայերին: Հնարավոր է, որ այդ արտահայտութիւնը հասկանալի չլինի հայերեն լեզուն ոչ այնքան լավ տիրապետող լսողին կամ վարդացողին. «Պեստրեցովը խից շախմատի տախտակը և թշնամու թիկունքին հասցրեց եզրափակիչ հարվածը: Գերասիմովը վայր դրեց զենքերը» (ՇՀ, էջ 19):

Լեզվի ենթահամակարգային կառուցվածքը և նրա արտահայտման որոշ տարրերի ոչ խիստ համակարգայնութիւնն օգնում են, որպեսզի փոխըմբռնումը հստակ լինի: Այս տեսակետից կարևոր է նաև այն հանգամանքը, որ լեզուն բացարձակ ճշգրիտ մաթեմատիկական և տրամաբանական կանոնների չի ենթարկվում: Խոսքի արտահայտման հավելյալ միջոցները և լեզվական համակարգի որոշ տարրերի սահմանափակ լինելը շեն խանգարում տարբեր տիպի հակադրութիւններ ստեղծելուն: Ընդհակառակը, դրանք հնարավորութիւն են տալիս լեզվական համակարգին խոսքը կառուցել ավելի ճկուն ու պատկերավոր:

Համակարգը կարելի է պատկերել որպես հակադրվող կողմերի որոշակի խմբեր, իսկ նորման՝ խոսքի մեջ այդ համակարգի տարրերի համընդհանուր իրացման երևութներ: Ահա թե ինչու խոսքի մեջ հաճախ կիրառվում են հակադրվող այնպիսի հականիշներ, ինչպես մեծ-փոքր, սիրելի-ատելի, բերել-տանել, բավարար-անբավարար, կենդանի-մեռած և այլն: Այս բառերի գործածութիւնը տարբեր տիպի կոնտրաստներում, նրանց հակադրութիւնները բազմաթիւ կիրառութիւններում կարող են վկայել մի կարևոր հանգամանք ևս. այն, որ թեև խոսքը, հաղորդակցումը կատարվում է լեզվում գործող համապատասխան կանոնների համաձայն, այսինքն՝ խոսքը միշտ իրացվում է հաշվի առնելով հասարակութիւնի կողմից ընդունված նորմաները, բայց ամեն դեպքում այն նաև անհատական բնույթ ունի: Այս տեսակետից հնարավոր է, որ կոնտեքստային կամ խոսքային հականիշները կանոնավոր կերպով չհակադրվեն, այլ հակադրվեն սոսկ որոշ պայմաններում, հատկապես խոսքի այդ հատվածում, միայն տվյալ իրադրութիւնի մեջ: Օրինակ՝

Ինչ լավ է, որ դու
Չես ապրել սիրո արվարձանում
Եվ միայն նրա կենտրոնը գիտես,

Ինչ լավ է, որ քո
Նորածնորեն դիզված մազերում
Ունես հնարույր բարութիւն հետքեր

(ՊՍԵԼ, էջ 152):

Բանաստեղծութիւնի առաջին եռատողում լեզվի մակարդակին վերաբերող արվարձան-կենտրոն հականիշ բառերը թեև գործածված են փոխաբերա-

բար, բայց նրանց հակաշուկայային հնարավոր է նաև ուղղակի իմաստների հակադրության դեպքում: Իսկ երկրորդ եռատողում հակադրված են կոն-տեքստային կամ խոսքային մակարդակում հանդես եկող նորաձևերեն-հնա-բույր հականիշ բառերը: Խոսքից դուրս այդ բառերի բուն հականիշներն են. նորաձևերեն-հնաձևերեն, հնաբույր-նորաբույր: Այստեղից բխում է, որ սո-վորաբար հականիշ համարվող բառերից մեկի իմաստը նախատեսում է նաև իմաստային մյուս բաղադրիչը: Օրինակ՝ ուրախություն-տխրություն, ծանոթ-անծանոթ, ապրել-մեռնել, իրական-անիրական, վարսեղ-անվարս հականիշները հակադրվում են որպես միևնույն երևույթի, միևնույն հասկացողության հակառակ կողմերն անվանող բառեր: Բայց ահա տարբեր կիրառություննե-րում, տարբեր կոնտեքստներում մենք հանդիպում ենք հականշային տարբե-րակների, որոնցից յուրաքանչյուրը գործածվում է ոճական որոշակի նկատա-ռումով. «Մարդիկ օղուն գինի խառնում ու մոռացած դարդ ու ցավեր հանձնե-րում են ուրախության» (ՊՍԱԶ, էջ 207): «Փրկված վանեցին այսուհետ միայն իր երազի մեջ կարող է լսել այդ ձայնը ծանոթ և օտարոտի» (ն. տ., էջ 207): «Վեր է ծածկ շեն աշխարհը մի շիրմատան, ուր այլևս չեն էլ ճարվի ապրող մարդիկ, որ բյուրավոր հանգչողներին երանի տան» (ն. տ., էջ 196): «Ծվ եթե աստծուց տարբերվում էին, ապա այնքանով, որ նա անգո է, իրենք՝ իրական» (ն. տ., էջ 275): «Նույն չոր բարձին Լեռի գլխի դեմ վարսեղ գլուխն իսպառ-դներ» (ն. տ., էջ 129): «Ծս չէի նայում աչքերին դիտմամբ, որ կեռ հոնքերի բացմամբ ու կիտմամբ փոխում են և՛ ձև, և՛ ցուք, և՛ երանգ» (ՊԱՄՄ, էջ 13): Ընդգծված բառերը վերոհիշյալ հականիշների համեմատ (ուրախություն-տխրություն, ծանոթ-անծանոթ, ապրել-մեռնել, իրական-անիրական և այլն) ունեն գործածության նեղ ոլորտ, ուստի և կարող են հակադրվել սահմանա-փակ թվով կոնտեքստներում:

Հնարավոր է նաև հակաշուկայային ավելի ընդարձակ պատկերացմամբ, երբ հակադրվող միավորները հակադրվեն իմաստային շատ հատկանիշներով: Այդպիսի հակադրությունները հաճախ պատահում են ամենատարբեր ժան-րերի տեքստերում: Օրինակ՝ Ծս քո բարեկամն եմ և ոչ թե ծառան կոնտեքստում ծառա-բարեկամ բառերը բուն հականիշներ չեն, այլ «իրադրական», «բազ-մաբնույթ» (многоспектный) հականիշներ: Խոսքում հակադրվող նման բառերի հակաշուկայային տարբերվում է սովորական, բուն հականիշների հակադրությունից: «Սովորական հականիշները» Գ. Մելնիկովի բնորոշմամբ՝ սոսկ «բազմասկզբունք» հականիշների մի տարբերակն են⁴:

Անհատական խոսքի մեջ հաճախ հակադրվում են այնպիսի բառեր, որոնք իմաստային տեսակետից պատկանում են տարբեր թեմատիկ խմբերի, և իրենց գլխավոր իմաստներով հակադրվելու քիչ հնարավորություններ ունեն: Թեև այդպիսի բառերը, սովորաբար, իրենց հիմնական գործառու-թյամբ, իմաստային տարբեր խմբերի են պատկանում, սակայն կոնկրետ խոսքի մեջ, որոշակի կոնտեքստում հնարավոր է դառնում միավորել դրանք մեկ թեմատիկ խմբի մեջ: Այդ դեպքում նման բառերի իմաստային ակնհայտ տարբերությունները չեզոքանում են տվյալ կոնտեքստում, տվյալ կիրա-ռության մեջ դառնում են ոչ էական: Օրինակ՝ վերը նշված «Ծս քո բարե-

⁴ Г. П. Мельников, О типах дуализмов языкового знака («Научные доклады высшей школы», «Филологические науки», 1971, 5, стр. 58).

կամն եմ և ոչ թե ծառան» նախադասության մեջ ծառա և բարեկամ բառերն իրենց հիմնական գործառնության հականիշ բառեր չեն, և հազիվ թե հնարավոր լինի դրանք դիտել որպես մեկ հականշային խումբ լեզվական նորմայի մակարդակում: Կամ «Բատրոնը ոչ թե հայելի է, այլ խոշորացույց» (ԳԹ, 21. III. 1975): «Եվ այն բառը տուր, որ բառ չէ բնավ, այլ մաքուր արծաթ» (ն. տ.) նախադասություններում ընդգծված բառերն իրադրական հականիշներ են, այսինքն՝ այստեղ գործ ունենք բառերի իրադրական հակադրությունների հետ: Սովորաբար նման հակադրությունն արտահայտվում է միայն եզակի կոնտեքստում և սահմանափակվում է միայն տվյալ կիրառությամբ:

Անհատական խոսքի մեջ կարող են իրացվել այնպիսի հատկանիշներ, որոնք նորմատիվ գործածության մեջ պակասում են, սակայն բխում են լեզվի պոտենցիալ հնարավորություններից: Այսպես՝ ժամանակակից հայերենում գործածական է մթնոլորտ բառը «երկրագունդը շրջապատող օդը» ուղղակի իմաստով և «շրջապատող պայմաններ, հանգամանքներ» փոխաբերական իմաստով: Եվ հայերեն իմացող յուրաքանչյուր ոք կարող է հաստատել, որ դժվար է գտնել այդ բառի հականիշը, ավելին, այն հականիշ չունի: Բայց ահա Պ. Սևակի մի բանաստեղծության մեջ կարողում ենք.

Սևերես երկինքն ինքնաբավորեն
Դառնում է իսկույն պարզերես կրկին,
Ու մթնոլորտը՝ արդեն լուսավորտ (ՊՍԵԼ, էջ 27):

Այստեղ Պ. Սևակը մթնոլորտ բառի և նրա ինքնաստեղծ լուսավորտ հականիշների հակադրության միջոցով ընդգծում է այնպիսի իմաստներ, որոնք իրականում հատուկ չեն այդ բառերին՝ «մութն ընկնելուն», «լույսը բացվելուն»:

Անհատական խոսքում հնարավոր է շեղում լեզվական ընդունված նորմայից: Դա մեծ մասամբ լինում է այն դեպքերում, երբ խոսողը ըստ հարկի ճիշտ չի օգտվում լեզվի պոտենցիալ հնարավորություններից: Օրինակ՝ «Բայց պարզվեց, որ տասնմեկ ծանրակշիռ և երեք մանրակշիռ գիրք ունեմ» (Գ, 7, 1974, էջ 4), այստեղ հեղինակը կշիռ ասելով նկատի ունի այդ ստեղծագործությունների ծավալը: Համեմայն դեպս ծանրակշիռ ածականի հականիշը «մանրակշիռը» չէ, և ընդհանրապես ժամանակակից գրական հայերենում այն չկա: Այստեղ հեղինակը ջանում է ընդգծել նրա փոխաբերական իմաստը, բայց կոնկրետ դեպքում այս կիրառությունը շեղում է ժամանակակից գրական հայերենում ընդունված լեզվական նորմայից:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ նորմայի և խոսքի մակարդակում բացահայտվում են հակադրվող բառերի իմաստային տարբեր հարաբերությունները, կանոնավոր և ոչ կանոնավոր կերպով հակադրվելու նրանց յուրահատկությունները, այսինքն՝

1. Նորմայի մակարդակում հակադրվում են բուն հակադրությունները (գեր-նիհար, սիրելի-ատելի, բերել-տանել, բավարար-անբավարար և այլն), որոնք պարտադիր և հանձնարարելի են: Այդ բառերը տարբեր բնույթի կոնտեքստներում ունեն կանոնավոր կերպով հակադրվելու լայն հնարավորություններ, ուստի և հակադրվում են բազմաթիվ կոնտեքստներում:

2. Անհատական խոսքում բացի բուն հականիշներից կարող են հակադրվել նաև. ա) կոնտեքստային կամ խոսքային հակադրությունները (նորածն-լարբեր 10—8

րեն-ճնաքույր, ապրող-ճանգչող, լերկ-վարսեղ, իրական-անգո և այլն), որոնք հականշային տարբերակներ են, և դրանցից յուրաքանչյուրն արտահայտում է ոճական որոշ երանգ: Այդ բառերն ունեն հակադրվելու ավելի պակաս հնարավորություններ և ի տարբերություն բուն հականշաների կարող են հակադրվել ավելի քիչ թվով կոնտեքստներում: ր) իրադրական ճականիշները (բարեկամ-ծառա, ճայելի-խոշորացույց, բառ-արծաթ և այլն) հանդես են գալիս միայն անհատական խոսքի մակարդակում, պատկանում են տարբեր թեմատիկ խմբերի և հակադրվում են միայն եղակի դեպքերում, գրեթե միայն մեկ կոնտեքստում:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ — «Գարուն» ամսագիր

ԳԲ — «Գրական թերթ»

ԾԾ — «Երեկոյան Երևան»

Շ — Շեքսպիր, Ընտիր երկեր, հ. 2, Երևան, 1964:

ՇՀ — «Շախմատային Հայաստան», № 7, 1974:

ՊԱԱԶ — Պարույր Սևակ, Անլուելի Զանգակատուն, Երևան, 1973:

ՊՍԵԼ — Պարույր Սևակ, Եղիցի լույս, Երևան, 1969:

ՊՍՄԱՄ — Պարույր Սևակ, Մարդը ափի մեջ, Երևան, 1963:

ՊՎՄԺԶ — Պոլ Վիալար, Մեռնելու ժամանակ էլ չկա, Երևան, 1973:

Ն. տ. — Նույն տեղում:

ЛЕКСИЧЕСКАЯ АНТОНИМИЯ НА УРОВНЕ СИСТЕМЫ, НОРМЫ И ИНДИВИДУАЛЬНОЙ РЕЧИ

РИМА ШАЛУНЦ

Резюме

Исследование лексической антонимии в современном армянском языке показывает, что смысловые отношения между антонимами, употребляющимися на уровне нормы и на уровне индивидуальной речи, неоднотипны; соответственно, антонимы различаются по их способности входить в регулярные или нерегулярные противопоставления.

На уровне нормы противопоставляются *собственно антонимы* (գիր-նրհաղ, սիրելի-առելի, բերելի-առնելի и т. п.), которые рекомендуются как обязательные элементы регулярных противопоставлений, широко используемые в любом контексте. На уровне индивидуальной речи, помимо собственно антонимов, противопоставляются: а) *контекстуальные или речевые антонимы* (նորաձևորեն-ճնաքույր, ապրող-ճանգչող, լերկ-վարսեղ и т. п.), являющиеся вариантами собственно антонимов; способность противопоставляться у данных слов намного слабее, поэтому они используются в значительно меньшем числе контекстов, чем собственно антонимы; б) *ситуативные антонимы* (բարեկամ-ծառա, ճայելի-խոշորացույց, բառ-արծաթ, и т. п.) — противопоставляющиеся в единичных случаях, почти в одном лишь контексте.